ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1952 Общественные науки

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

1952 թ. փետրվարի 4-ին, 79 տարեկան հասակում վախճանվեց սովետական պատմական գիտության ականավոր ներկայացուցիչ՝ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Համազասպի Մանանդյանը։



Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը հայտնի է իբրև ականավոր հայագետ-պատմաբան և բանասեր, հեղինակ մի շարք կապիտալ մոնոգրաֆիկ աշխատությունների՝ նվիրված հին և միջնադարյան Հայաստանի սոցիալական և տնտեսական կյանքի ուսումնասիրությանը։

Ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյանը ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին Ախալցխան քաղաքում։ 1897 թվականին նա ավարտում է Վիեննայի համալսարանի փիլիսոփայական բաժանմունքը և պաշտպանություն է ներկայացնում իր առաջին հետազոտությունը՝ Beiträge Zur albanischen Geschichte (Leipzig 1897), *որի համար արժանանում է փիլիսոփայական դոկտորի կոչման։ Մի տարուց հետո (1898 թ.) Հ. Հ. Մանանդյանը հանձնում է էքստերն քննություններ Պետերբուրգի (այժմ Լենինգրադի) համալսարանի Արևելագիտական ֆակուլտետում և արժանանում է առաջին աստիճանի դիպլոմի։ Վերջապես 1909 թ. նա հանձնում է էքստերն քննություններ Դորպատի (այժմ Տարտու՝ Էստոնական ՍՍՌ) համալսարանում և արժանանում է Իրավաբանական ֆակուլտետի առաջին աստիճանի դիպլոմին։*

Ունենալով փայլուն կրթություն և պատրաստություն Հ. Հ. Մանանդյանը հայկական իրականության այն ժամանակվա պայմաններում չի կարողանում գործադրել իր ուժերն ու գիտությունը հայագիտության ասպարեզում։ Գոյությունը պահպանելու մշտական հոգսը ստիպում է նրան աշխատանք փնտրել դպրոցներում որպես ուսուցիչ և դատական օրգաններում՝ որպես երդվյալ հավատարմատար։ Չնայած այդ ամենին,

իր համառությամբ նա կարողանում է հաղթահարել բոլոր դժվարությունները և չթողնել իր սիրած ասպարեզը՝ հայագիտությունը։

Ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյանը ականավոր պատմաբանի իր կարողությունները դրսևորում է միայն Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո, երբ նրան առաջին անգամ ստեղծագործական մեծ աշխատանքի հնարավորություն է տրվում։ Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո Հ. Մանանդյանը նշանակվում է Երևանի նոր հիմնադրված Պետական համալսարանի ռեկտոր, ուր նա պիոներ է հանդիսանում Պատմագրական ֆակուլտետում հայագիտություն մտցնելու գործում, որի դեկանն է լինում երեք տարի շարունակ։ Նույն այդ համալսարանում 1926 թ. Հ. Մանանդյանը հաստատվում է հայագիտության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում։ Հենց այս պայմաններում է սկսվում Հ. Մանանդյանի ստեղծագործական մեծ աշխատանքը, որը նեղ-բանասիրական հարցերից անցնում է հին և միջնադարյան Հայաստանի սոցիալական ու տնտեսական կյանքի հարցերի գիտական հետազոտությանը, որ համահնչյուն էր նոր էպոխային ու սովետական նոր պատմագրությանը։ Իր երկարամյա գործունեության ընթացքում Հ. Մանանդյանը համալսարանում պատրաստել է պատմաբանների բազմաթիվ կադրեր։ Սովետական Հայաստանում պատմության բնագավառում աշխատող հիմնական կադրերը եղել են կամ նրա ուսանողները կամ ասպիրանտները։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի գործունեությունը որպես գիտական հետազոտողի գործունեություն՝ գնում է երկու ուղղությամբ—բանասիրության և պատմության, ըստ որում առաջինը նախորդում է երկրորդին։

Հ. Մանանդյանը իր գիտական գործունեության նախասովետական շրջանում հանդես է գալիս մի շարք հետազոտություններով, նվիրված միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի պատմության հարցերին և հրատարակում է բնագրեր, որոնց մեջ նա իրեն ցույց է տալիս իրրև փայլուն բանասեր։ Այս աշխատությունների թվին են պատկանում՝ Nonnos Die Scholien zur fünf Reden des Gregor von Nazianz (Marburg 1903), տեքստերի ժողովածու «Հայոց նոր վկաները», (Հ. Աճառյանի հետ միասին, Վաղարշապատ, 1903), «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» (մատենագրական հետազոտություն, Վաղարշապատ, 1904)։ Առանձնապես հարկավոր է նշել Հ. Մանանդյանի կողմից հրատարակված բնագրերը, որոնք իրրև համեմատական տեքստեր, օրինակելի են. սրանցից հարկավոր է նշել «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի ընծայեալ Էլիասի իմաստասերի» (Bibliotheca armeno-georgica, I ՍՊԲ, 1911), «Թեոփեսայ՝ Յաղագս ճարտասանական կրթութեանց» (Երևան, 1938, հայերեն և հունարեն բնագրերը)։ Բանասիրական նրա աշխատությունների ամենախոշոր գործն է 1928 թվականին լույս տեսած՝ «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները» մենագրությունը, որի մեջ մշակված են միջնադարյան հայկական գրականության պատմության մի ամբողջ մեծ բաժնի ուսումնասիրության ձևերն ու մեթոդները, և դրա հետ միասին Երևան հանված այն հսկայական ավանդը, որ մուծել են հայերը՝ Արևմուտքի միջնադարյան մոլեռանդների հալածանքներից անտիկ գիտությունը պահպանելու գործում։

1921 թվականից, երբ Հ. Մանանդյանը սկսում է կարդալ հայ ժողո-

վերդի պատմության դասախոսությունների իր կուրսը՝ նրա համար հնարավորություն է ստեղծվում զուտ բանասիրական խնդիրներից անցնել Հայաստանի պատմության սոցիալական և տնտեսական խնդիրներին։ 1925 թվականից Հ. Մանանդյանը հրապարակում է հայ ժողովրդի պատմության նվիրված հետազոտություններ, որոնք հիմք դրին Հայաստանի պատմական անցյալի ուսումնասիրությանը՝ նրա տնտեսական զարգացման տեսակետից։ Փայլուն հետազոտությունների այս շարքը սկսվեց «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում» (Երևան, 1925) աշխատությամբ։ Այս աշխատության մեջ հեղինակն առաջին անգամ հայկական պատմագրության մեջ արծարծում է ֆեոդալական Հայաստանի անմիջական արտադրողների՝ գյուղացիության սոցիալական և տնտեսական դրության խնդիրը։ Հիշյալ աշխատության մեջ հատուկ ուշադրության արժանի են գիտնականի փորձերը՝ ցույց տալու հին հայկական գյուղական համայնքի ներքին կառուցվածքի հիմնական տարրերը։ Շինականների դրության մասին հոդվածի շարունակությունն է հանդիսանում մի տարի անց լույս տեսած հետազոտությունը՝ «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» (Երևան, 1926), որի մեջ մանրազնին քննության են ենթարկվում V—VII-դդ. Հայաստանի հարկային տերմինները։

Այս հոդվածներին հետևում են՝ «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» (Երևան, 1927, 1928) վերնագիրը կրող երկու պրակով լույս տեսած մանր հետազոտությունների շարքը, որտեղ տալիս է հայ մատենագրության և արձանագրությունների մեջ հանդիպող սոցիալական ու տնտեսական տերմինների բանասիրական վերլուծությունը։

Միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքի առանձին մոմենտների լուսաբանման համար առաջնակարգ նշանակություն ունի մետրոլոգիան ու նումիզմատիկան, որոնց նվիրված է «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» (Երևան, 1930) ընդհանուր վերնագիր կրող հոդվածների շարքը, որոնց մեջ չափերի ու կշիռների միջնադարյան միավորները փոխադրված են ժամանակակից տասնորդական սիստեմի։ Հոդվածների նույն այս շարքին է պատկանում «Էրատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը» (Երևան, 1934) աշխատությունը, որտեղ հեղինակը շոշափում է երկրի միջօրեականի առաջին աստիճանային չափումը, որ կատարել է Էրատոսթենեսը (275—195)։ Հ. Մանանդյանը պարզում է, որ Էրատոսթենեսի ստադիոնը տարածության հիմնական չափն է հանդիսացել Պարսկաստանում և Հայաստանում։ Այս խնդրի պարզաբանումն իր հերթին առաջ է քաշում մեզ հասած մղոնաչափերի (իտիներարիաների) ուսումնասիրությունը, մանավանդ IV-րդ դարի «Պևտինգերյան քարտեզը»։ Հին Հայաստանի ճանապարհների ուսումնասիրությանը մեծ գիտնականը նվիրել է մի շարք աշխատություններ, որոնց ամփոփումն է հանդիսանում՝ «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի» (Երևան, 1936) մեծածավալ մենագրությունը։

Այս խնդիրների հետ սերտ առնչություն ունեն Հին Հայաստանի պատմական աշխարհագրության հետ կապված մի շարք հարցերը։ Հ. Մանանդյանը գրում է պատմա-աշխարհագրական բնույթի մի շարք հոդված-

ներ, որոնք լույս են տեսնում երկու գրքով՝ «Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի խնդիրների մասին» (Երևան, 1944) և «Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ» (Երևան, 1945).

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի տեսադաշտից չեն վրիպում նաև հելլենիստական շրջանի Հայաստանի հունարեն արձանագրությունները, որոնց վերլուծմանը նա նվիրում է իր աշխատությունները՝ «Արմավիրի հունարեն արձանագրությունները՝ նոր լուսաբանությամբ (Երևան, 1946) և «Գառնիի հունարեն արձանագրությունը և Բառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» (Երևան, 1946). Այս աշխատություններում ինչպես և նախորդ բանասիրական-տեքստոլոգիական աշխատություններում, Հ. Մանանդյանը իրեն դրսևորում է իբրև մեր ժամանակի հունարեն լեզվի խոշորագույն մասնագետ.

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը արձագանքում է նաև այնպիսի տարեթվերին, ինչպիսիք են՝ Մեսրոպ Մաշտոցի մահվան 1500-ամյակը (տե՛ս նրա՝ Месроп-Маштоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван, 1941) և «Սասունցի Դավիթ», հայկական էպոսի 1000-ամյակը (տես նրա՝ «Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում՝ արաբական տիրապետության դեմ», Երևան, 1939).

Հայագետների միջև մեծ դիսկուսիա առաջացրեց Հ. Մանանդյանի՝ «Մովսես Խորենացու առեղծվածի լուծումը» գիրքը (Երևան, 1934).

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի այստեղ թված և այլ բազմաթիվ հետազոտությունները հող պատրաստեցին լայն ընդհանրացումների համար. Մեկը մյուսի ետևից լույս են տեսնում խոշոր մենագրություններ՝ «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен» (V в. до н. э.—XV в. н. э.) (Ереван, 1930): Ովքեր ուսումնասիրում են Կովկասի և Մերձավոր Արևելքի տնտեսական պատմության խնդիրները, չեն կարող աչքաթող անել այս գիրքը. Նախաբարական Հայաստանի հասարակակարգի հարցերին վերաբերող հոդվածների հանրագումարն է հանդիսանում նրա «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան)» (Երևան, 1934) մենագրությունը.

Հատկանշական է, որ այն ժամանակ, երբ Ն. Ադոնցի «Армения в эпоху Юстиниана» (СПБ, 1908) գրքում, որը նույն խնդիրներին է վերաբերվում, նախաբարական Հայաստանի անմիջական արտադրողների—շինականների մասին ի միջի այլոց է խոսվում, Հ. Մանանդյանի նշված աշխատության մեջ շինականներին նվիրվում է գրքի երրորդ մասը գրաղեցնող հատուկ մի գլուխ.

Դիտության մեջ խոշոր ավանդ է հանդիսանում նրա «Տիգրան Երկրորդը և Հռոմը» կապիտալ մենագրությունը (Երևան, 1940, որը լույս է տեսել նաև ռուսերեն լեզվով 1943 թ.). Բուրժուական հայագետ-պատմաբանները սովորաբար սահմանափակվում էին նրանով, որ Տիգրան II-ի ժամանակաշրջանի Հայաստանի պատմության մասին խոսելիս հիմնվում էին Մոմզենի, Ռեյնակի և Ֆեբրերոյի աշխատությունների վրա, որտեղ Հայաստանի պատմությունը դիտվում է իբրև մի դրվագ՝ կցված Հռոմի կամ Պոնտոսի պատմության. Այդ պատմաբանները, որպես Արևելքում հռոմեական մեծապետական քաղաքականության ջատագովներ, Պոնտոհռոմեական պատերազմները դիտում էին իբրև «բարբարոս Արևելքի» պայ-

քարը «քաղաքակիրթ Արևմուտքից դեմ։ Հ. Մանանդյանը ցույց է տալիս, որ, ընդհակառակը, Հռոմը Արևելքում հանդես եկավ իբրև հելլենիստական կուլտուրայի կործանող ու ոչնչացնող։ Նա բազմատում է հռոմեական պաշտոնական աղբյուրները հելլենիստական և հայկական ավելի ուշ շրջանի աղբյուրների հետ և, հենվելով նրանց համեմատական և քննադատական ուսումնասիրության վրա, տալիս է Հին Հայաստանի պատմության շատ ու շատ փաստերի միանգամայն նոր բացատրություն։

Մեծանուն գիտնականն իր կյանքի վերջին տարիներին դրել է «Բընական տեսություն հայ ժողովրդի պատմության» եռահատոր մենագրական աշխատությունը, որի առաջին հատորը լույս է տեսել 1945 թվականին և ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը VI դ. մ. թ. ա. մինչև I դ. մ. թ.։ Իսկ երրորդ հատորը լույս է տեսնելու մոտ ժամանակներս։ Վերջինս ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը XI—XV դդ.։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը սերտ կապեր էր պահպանում Մոսկվայի և Լենինգրադի գիտական հաստատությունների հետ։ Նա աշխատում էր իր բոլոր հետազոտությունները տալ նաև ռուսերեն լեզվով, կամ ամբողջապես, կամ համառոտ, որպեսզի մատչելի լինի Սովետական Միության բոլոր ժողովուրդներին։ Նրա աշխատությունները մեծ արժեք ունեն, մանավանդ Վրաստանի և Ադրբեջանի պատմական անցյալը ուսումնասիրողների համար։

Սովետական պատմական գիտության բնագավառում կատարած այս ծառայությունների համար Հ. Մանանդյանը բարձր գնահատության է արժանացել սովետական ժողովրդի, պարտիայի ու կառավարության կողմից։ 1935 թ. նոյեմբերի 28-ին, համաձայն Հայկական ՍՍՌ ԿԳԿ Նախագահության որոշման, Հ. Մանանդյանին շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում։ 1938 թվականին, երբ նշանակված էին Համամիութենական Գիտությունների ակադեմիայի ընտրությունները, Հ. Մանանդյանի թեկնածությունը ջերմ ընդունելություն է գտնում Սովետական Միության գիտական ողջ հասարակայնության կողմից։ 1939 թ. հունվարի 28-ին նա ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։ 1943 թվականին, երբ հիմնվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, Հ. Մանանդյանը հաստատվեց նոր Ակադեմիայի իսկական անդամ։

1945 թվականին, ՍՍՌՄ Գերագույն Սովետի որոշմամբ, ակադեմիկոս Հ. Մանանդյանը պարգևատրվում է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը դեռ չէր կորցրել իր աշխատանքային եռանդը, երբ դաժան մահը խլեց նրան իր սիրած ու փայփայած բնագավառից, անկատար թողնելով իր վերջին աշխատությունները։

Ս. ԵՐԵՄՅԱՆ